

լու մասին պատերազմական ատեանը բողոքովին անփոյթ կը գտնուի :

Ինչպէս արդէն ըսինք, Հայերը ապաստանած ըլլալով իրենց թաղը՝ իրենց տուներուն մէջ, իսլամ ամբոխը և զինուորները նոյն տեղը անոնց վրայ յարձակած են . այնպէս որ Հայերը միմիայն զրազած են իրենց պաշտպանութիւնով : Այս մասին ոչ մէկ կասկած գոյութիւն ունի : Այն տուներուն ճակատները, ուր Հայերը դիմադրեցին, թէ՛ զինուորներու և թէ՛ պաշարպօզուքներու կողմէ արձակուած գնդակներէն ծակծրկուած են :

Ո՞ր օրէնքը կամ խիղճը պիտի կարենար թոյլ տալ պատժելու անձ մը՝ որ սպաննած է նախայարձակ մէկը՝ նմանօրինակ պայմաններու մէջ :

Օրինաւոր ինֆնապաշտպանութիւնը՝ ո՛չ միայն օրհնիով շնորհուած է՝ այլ նաև բնական օրհնի մըն է՝ հասարակած մարդկային խիղճով : Չկայ մարդ մը, նոյնիսկ անասուն մը, որ չըզգայ ինֆզինֆ պաշտպանելու բնածին պէտքը :

Ի՞նչ պատճառաբանութիւն կարելի էր մեզ բերել՝ ընդունելու համար որ Հայ տարրը գուրի ըլլայ այս իրաւունքին :

Տեղական կառավարութիւնը, իր ոճիրը թագոյնելու նպատակով, պատերազմական ատեանի կազմութենէն առաջ իսկ պատրաստեց սուտ վկաներ և ամբաստանողներ : Օգտուելով ջարդէ պրծած Հայերու վերադարձէն և այդ տարաբախտներու ազատ կերպով արտայայտուելու անհամարձակութենէն, ամէն ճիգ թափած է այս զարհուրելի դէպքերու մեծութիւնը ծածկելու և անոնց բնոյթը եղծելու համար : Բոլոր այն Հայերը, որոնք օրինաւոր ինքնապաշտպանութեամբ իրենց զէնքին դիմած էին, քննութիւն կատարելու կամ վկայութիւններ առնուելու կեղծ պատրուակին տակ՝ ոճիրով ամբաստանուեցան :